«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 1791-Ն որոշման մեջ փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ի N 1791-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ոստիկանության մասին» օրենքի 40.1-ին հոդվածի 1-ին մասի, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 3-րդ, 6-րդ, 11-րդ, 15-րդ, 17-րդ հոդվածների և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիա» պետական հիմնարկը վերակազմակերպելու և «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» N 1791-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 6-րդ կետում վայրն է՝ քաղ. Երևան, բառերը փոխարինել վայրն է՝ **Հայաստանի Հանրապետություն,** քաղաք Երևան, բառերով,

2) **8-րդ կետում՝**

ա. դ ենթակետը պատրաստումը» բառից հետո **լրացնել և վերապատրաստումը» բառերով,**

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթակետեր՝

զ) կրթության որակի ապահովումը և բարելավման համապատասխան

համակարգի ներդրումը.

է) կրթական գործընթացի անընդհատության, թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.

ը) սովորողի՝ ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով դաստիարակումը.

թ) բնակչության շրջանում գիտելիքների տարածումը, նրա կրթական և մշակութային մակարդակի բարձրացումը.

ժ) սովորողների մեջ քաղաքացիական դիրքորոշման, հմտությունների և աշխատանքի նկատմամբ պատասխանատվության արմատավորումը՝ ժողովրդավարական և քաղաքացիական հասարակության կառավարման պայմաններում:»,

3) 10-րդ կետի «բ» ենթակետում «ուսումնական պրակտիկայի» բառերը փոխարինել «պրակտիկայի» բառով,

4) **11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝**

«**11. Կրթահամալիրի** կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, «Ոստիկանությունում ծառայության մասին», «Ոստիկանության մասին», «**Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին**», «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքներին, այլ օրենքներին և իրավական ակտերին, սույն կանոնադրությանը և Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամաններին համապատասխան:**»,**

5) 18-րդ կետում՝

ա. «ժդ» ենթակետում «Գոյացած արտաբյուջետային» բառերը փոխարինել «Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված» բառերով,

բ. «ժե» ենթակետում «արտաբյուջետային» բառը փոխարինել «ձեռնարկատիրական գործունեությունից ստացված» բառերով,

6) 21-րդ կետի «թ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«թ) լսում և գնահատում է Կրթահամալիրի գործունեության տարեկան հաշվետվությունը:»,

7) 22.2-րդ կետից հանել 2-րդ նախադասությունը,

8) 22.3-րդ կետից հանել 3-րդ նախադասությունը,

9) 43-րդ կետում՝

ա. բ ենթակետում Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» բառերը փոխարինել Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին բառերով, իսկ «իրավունքներից» բառից հետո լրացնել «(բացառությամբ վճարովի հիմունքներով սովորողների).»,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթակետեր՝

թ) Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ստանալու սահմանված չափի անվանական կրթաթոշակ.

ժ) ծանոթանալու սույն կանոնադրությանը և նորմատիվ այլ փաստաթղթերի, կնքելու պայմանագիր Կրթահամալիրի հետ՝ ուսումնառության պայմանների վերաբերյալ.

ժա) սահմանված կարգով անհրաժեշտության դեպքում ստանալու ակադեմիական արձակուրդ մինչև մեկ տարի ժամկետով, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

ժբ) ուսման բարձր առաջադիմության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալու բարոյական և (կամ) նյութական խրախուսանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Կրթահամալիրի կողմից սահմանած կարգով.

ժգ) վճարովի հիմունքներով կրթություն ստանալու դեպքում օգտվելու ուսման տարեկան վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

10) 44-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթակետերով՝

ե) բարձր պահել Կրթահամալիրի պատիվն ու հեղինակությունը, պահպանել հասարակական համակեցության և բարոյականության նորմերը.

զ) վճարովի հիմունքներով կրթություն ստանալու դեպքում պայմանագրում նշված ժամկետում վճարել ուսման վարձավճարը: Ուսման վարձավճարը պայմանագրում նշված ժամկետում չվճարելու դեպքում այդ սովորողները ազատվում են Կրթահամալիրից:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

« » _____ 2020

թ.

ք.Երևան